

12. Այն հրամանը որ չես կրնար պահել տակ, մի՛ տար:
13. Օրինաւոր է անձին օգուտը վնասել, բայց առանց ուրիշինը ֆրասելու:
14. Ոչ երբէք անձը արդարացնել, ուրիշին յանցանքը օրինակ բերելով:
15. Շատ անգամ փակ բերանը չիհեծեր, բայց հագուստը կը դողայ, վասն զի սիրտն է որ կը զարնէ մարմնոյն՝ իր բանտին միջէն:
16. Մեր զրկմանց պտուղները պէտք է որ քաջաւերեն ուրիշներուն շոայլու թիւնը:
17. Յաղթել սիրոյ, քանի որ յիմարական կիրք է դարձած:
18. Ամենայն արագ յաղորդման՝ պղտոր աղբիւր մը ունի:
19. Երկու դատաստան կայ՝ մէկը խիստ՝ անոր դէմ, որ չիյաջողիր, միւսը նեւրողամիտ՝ անոր, որ կը յաջողի:
20. Շատ դիւրին է անյաջող գործ մը վերջէն դատել, դժուարը՝ ժամանակին լաւ խորհուրդ տալն է:
21. Պատերազմէն վերջը խաղաղութիւն կու գայ, խառնակութենէն վերջը՝ կարգ:
22. Արժանաւորի միշտ, պահանջիւ երբէք:
23. Ատուած շատերուն տաղանդ մը տուած է յինչ ինչ, բայց ոչ ամենուն ալ դատողութիւն:
24. Վեհաժողովները, ինչպէս նաև յանձնաժողովները հնարուած են շատ անգամ բան մը չորոշելու և ժամ մը առաջ նիստէն ելնելու համար:
25. Ամէն մարդ գեղեցիկ անցեալ մը կը պատմէ երիտասարդութեան, սակայն ունի ներկայ մը ամենուն յայտնի՝ և ապագայ մը իրեն իսկ անծանօթ, բայց յոյսերով լի:
26. Տապանը է մասնատուի մը պատրաստուած բալասան բուրդով ձեռքէ մը իբրև օծիտ յախտենականութեան հետ պակուտող մարդուն:
27. Վտանգաւոր է դեղձանիկին ազատութիւնը, վասն զի վանդակէն դուրս

- միշտ կատուին բերանը կը լննայ:
28. Ժամանակիս նոր յունագէտները իրենց յունարէնը զաղդիբէնէն վերայէն կը թարգմանեն:
29. Պաղղիացիք չափազանց ազնիւ են, նոյն իսկ կախաղանին տակ դահիճը չուանը դատապարտեալին վրը անցուցած ժամանակ՝ չի մոռնար ըսելու, Pardon s'il vous plait.

3200

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ԵԶ
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Խաչատուր Դաւրթեցի	481
ՄԵԼԷՔԵԱՆ ԵՂԻԱ. — Բանաստեղծութիւններ	489
ԱՍՏՈՒՐԵԱՆ Հ. Յ. — Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հոռվմայ	494
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Հ. Արսէն Բաղատունի	510
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Էլեկտրա	530
ՄԵԼԷՔԵԱՆ ԵՂԻԱ. — Բանաստեղծութիւններ	537
ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — Տարկուտայ Տաստայ	542
ԽՄԻ. — Հանդիստ. Հ. Նիկողայոս Վ. Զիբի	558
ՕՏԱՊԱՇԵԱՆ Հ. Թ. — Օր. Պիեքէի շուրջ	559
ԹՈՐՈՍԵԱՆ Հ. Յ. — Այիթալահի հովուական կամ վարդապետական թուղթ	559
Jeane Carlyle. — Անպատէն՝ Առ ծիծառնուկ որ իր բոյնը մեր տանեաց ներքեւ կը շինէ թրգմ. 3200	567
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Տրեպոլիի Իսալ և Թուրք պատերազմը	567
3200. — Քաղուածոյք ի վերջ տարւոյ	575

